

ների համար վճարումները կատարել լրիվ ծավալով, յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ,

բ) օպերատորին տեղեկացնել բաժանորդային սարքավորման ձևի (տեսակի) մասին և դրանք պահել սարքին վիճակում,

գ) չթույլատրել արգելված բաժանորդային սարքավորումների միացումը ցանցին,

դ) վճարել մատուցված հեռախոսակապի ծառայությունների համար նաև այն դեպքում, երբ բաժանորդային սարքավորումը օգտագործվել է այլ անձանց կողմից, անկախ այն բանից, համաձայնեցվել է բաժանորդի հետ, թե ոչ:

Բաժանորդն իրավունք ունի.

ա) օգտվել հեռախոսակապի ծառայությունների ոլորտում օրենսդրությամբ սահմանված արտոնություններից,

բ) պահանջել հեռախոսակապի ծառայությունների վճարման վերահաշվարկ կամ այդ ծառայություններից չօգտվելու դեպքում՝ վճարված դրամական միջոցների վերադարձ,

գ) ցանկացած պահի հրաժարվել պայմանագրից:

Կողմերը ունեն այլ իրավունքներ և պարտականություններ, որոնք սահմանված են հեռախոսակապի մատուցման կանոններով և այլ իրավական ակտերով:

**ՀԵՌԱՏՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
ՎԵՐԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Հեռախոսակապի վնասվածքները վերացնելու պարտականությունը կրում է օպերատորը:

Վնասվածքները լինում են կայանային (հեռախոսակայանների սարքավորումների բոլոր այն վնասվածքները, որոնք խախտում են կայանի աշխատանքն ամբողջությամբ, առանձին հանգույցներում, սարքերում կամ մասերում) և մալուխային (մալուխի առանձին զույգերի (ջիղերի) շարքից դուրս գալը թոփչում կամ կցորդիչում, ինչպես նաև վերջնային մալուխային սարքավորումում (բաշխիչ պահարաններ, տուփեր, մալուխային արկղեր):

Հեռախոսակապի խափանման մասին բաժանորդի հայտը պետք է ընդունվի հեռախոսակայանի վերանորոգման գրասենյակում աշխատանքային ժամերի ընթացքում, այդ թվում՝ տոնական և հանգստյան օրերին:

Կայանային վնասվածքի թույլատրելի առավելագույն տևողությունը չպետք է գերազանցի **24 ժամը**:

Տեղական ցանցերում մայրուղային մալուխների (200 զույգից ավելի ունակությամբ) խոշոր վնասվածքների (վթարների) դեպքում, բաժանորդային սարքավորման վնասվածքի առավելագույն տևողությունը չպետք է գերազանցի 5 օրը: Գերազանցելու դեպքում անգործության յուրաքանչյուր օրվա համար կատարվում է վարձի պակասեցում՝ սահմանված սակագնի **5%-ի չափով**:

Բաժանորդային սարքավորման աշխատանքի վերականգնման հսկիչ ժամկետը կազմում է **24 ժամ**՝ հայտի ներկայացման պահից:

Միջադարպային հեռախոսակապի վնասվածքների վերականգնման առավելագույն ժամանակը կազմում է.

ա) կայանային և տոնալ հաճախության կապուղիների համար՝ **1 ժամ**,

բ) գծային՝

- տրակտի փոխարինում. պահուստային տրակտի առկայության դեպքում՝ **30 րոպե**, տրակտի բացակայության դեպքում՝ **12 ժամ**:

Միջազգային հեռախոսակապի վնասվածքների վերականգնման ժամանակը կազմում է՝

կայանային՝ **մինչև 1 ժամ**,
գծային. անցում ռեզերվի՝ **մինչև 40 րոպե**, վնասվածքների վերացում՝ **մինչև 24 ժամ**:

Վերոնշյալ ժամկետների խախտման պարագայում բաժանորդն իրավունք ունի օպերատորից պահանջելու վնասների հատուցում:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:



**ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԵՌԱՏՄԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐԸ**

Սույն տեղեկատվական թերթիկում տեղեկատվություն է տրվում հեռախոսակապի մատուցման ոլորտում ծագող իրավահարաբերությունների, մասնավորապես, հեռախոսակապի մատուցման ընդհանուր պայմանների, օպերատորի և բաժանորդի հիմնական իրավունքների և պարտականությունների, պատասխանատվության և հարակից այլ հարցերի վերաբերյալ:

ՀՆՈՒՍՆԱԿԱԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հեռախոսակապի մատուցման ծառայությունները տրվում են հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա, որը կնքվում է հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող ընկերության (հեռահաղորդակցության օպերատոր) և բաժանորդի (հաճախորդի) միջև:

ՀՀ տարածքում հեռահաղորդակցության օպերատորի (հետագա տեքստում՝ օպերատոր) և հաճախորդի (օգտվողի) փոխհարաբերությունները, հեռախոսակապի ծառայություններ մատուցելիս, իրականացվում են **հայերենով**:

Օպերատորը պարտավոր է պահպանել էլեկտրակապով փոխանցվող հեռախոսային խոսակցությունների, ինչպես նաև դրանց պատկանող տեղեկությունների գաղտնիությունը: Հեռախոսային խոսակցությունների լսումը, էլեկտրակապի հաղորդագրությունների հետ ծանոթացումը, դրանց վերաբերյալ տեղեկությունների ստացումը, ինչպես նաև կապի գաղտնիության այլ սահմանափակումները կարող են կատարվել բացառիկ դեպքերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

Հեռախոսակապից օգտվելու միջոցով տեղեկատվություն ստանալու և այլ ծառայություններից օգտվելու համար օգտվողն իրավունք ունի հեռախոսացանցին միացնել օրենքով չարգելված սարքեր, օրինակ, հեռախոսային սարքավորումներ, տվյալների փոխանցման և տելեմատիկ ծառայությունների վերջնային բաժանորդային սարքավորումներ և այլն:

Օպերատորը պարտավոր է, ելնելով տեղական հեռախոսացանցի ունակություններից, ավտոմատ հեռախոսներ տեղադրել փողոցներում, հրապարակներում, օդանավակայաններում, հիվանդանոցներում և այլ հասարակական վայրերում:

Օպերատորը պարտավոր է ապահովել օգտվողի օպերատիվ, արտակարգ և վթարային ծառայությունների անվճար կանչի հնարավորությունը՝ ներառյալ հրշեջ պաշտպանության (1-01), ոստիկանության (1-02), շտապ բժշկական օգնության (1-03), գազի անվտանգության ծառայության (1-04), փրկարար ծառայության (1-18):

ՀՆՈՒՍՆԱԿԱԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հեռախոսակապի ծառայությունների մատուցման

պայմանագրի կնքելու նպատակով անձը օպերատորին ներկայացնում է դիմում: Օպերատորը դիմումի լուսապատճենը երեք օրվա ընթացքում փոստով կամ առձեռն հանձնում ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարություն (հետագա տեքստում՝ Նախարարություն)՝ դիմումի հետագա ընթացքի վերաբերյալ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

Օպերատորը 10-օրյա ժամկետում կայացնում է որոշում և այդ մասին տեղեկացնում է դիմողին ու Նախարարությանը՝ փոստով կամ առձեռն: Որոշման հետ համաձայն չլինելու դեպքում դիմողը կարող է այն բողոքարկել Նախարարություն և (կամ) դատարան:

Նախարարության պահանջով օպերատորը պարտավոր է 10-օրյա ժամկետում ներկայացնել դիմումի մերժումը հիմնավորող բոլոր նյութերը:

Դիմողի բողոքի ներկայացման պահից 20 օրվա ընթացքում Նախարարությունը պարտավոր է կայացնել որոշում դիմումի մերժման հիմնավորվածության մասին և 10-օրյա ժամկետում դիմողին ու օպերատորին հայտնել իր կողմից ընդունված որոշման մասին, որի կատարումը պարտադիր է օպերատորի համար:

Հեռախոսակապի ծառայությունների մատուցման պայմանագրի կնքվում է ըստ դիմումների տրման հերթականության: Օպերատորին և հաճախորդին տրվում է պայմանագրի մեկական օրինակ: Կնքման պահից հաճախորդը դառնում է բաժանորդ:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օպերատորը պարտավոր է.

ա) ապահովել հեռախոսակապի կայուն և որակյալ աշխատանքը,

բ) ձեռնարկել բոլոր հնարավոր քայլերը, որպեսզի պաշտպանի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը (ներառյալ խոսակցության փաստը, զանգողի և զանգը ստացողի ինքնությունը և նրանց գտնվելու վայրերը) և ցանցով անցնող այլ հաղորդումների պարունակությունը, չգրանցել և չպահպանել այդ տվյալները, բացառությամբ, երբ դա արվում է կիրառելի օրենքների կամ դատական որոշման համաձայն:

գ) ոչ բաժանորդի մեղքով հեռախոսակապի խափանումների, հեռախոսացանցերում տեղի ունեցած խոշոր վթարների դեպքերում, հեռախոսակապի խափանման պահից 1 օրվա ընթացքում, փոստով բաժանորդին տեղեկացնել հեռախոսակապի խափանման մասին՝ ամրագրելով խափանման օրը, ժամը և բաժանորդային սարքի անգործության յուրաքանչյուր օրվա

համար կատարել վարձի պակասեցում՝ սահմանված սակագնի 5%-ի չափով:

դ) բաժանորդից գանձել առավելագույնը՝ սահմանված բաժանորդային վարձի 50%-ը, այն դեպքերում, երբ բաժանորդին մեկ ամսից ավելի մատուցվում է տեխնիկապես և որակապես ոչ լիարժեք ծառայություն, այդ թվում, չի ապահովվում բաժանորդի անխափան ու անընդհատ մուտքը համակցված հեռախոսացանց,

ե) առնվազն հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2 ամիսների վերջից 15 օր առաջ բաժանորդին փոստով նախազգուշացնել վարձը չմոծելու պատճառով իր բաժանորդային սարքավորումը անջատելու մասին,

զ) առնվազն հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 3 ամիսների վերջից 15 օր առաջ բաժանորդին փոստով նախազգուշացնել վարձը չմոծելու պատճառով բաժանորդային համարը հանելու մասին,

է) հեռախոսակապի սակագների փոփոխության մասին հրապարակային տեղեկագրություն տրամադրել նոր սակագների ներդրումից առնվազն 30 օր առաջ,

ը) չվճարված ծառայությունների համար անջատված բաժանորդային սարքավորումները միացնել ոչ ուշ, քան պարտքի մարման փաստաթղթերը օպերատորին ներկայացնելու պահից 24 ժամվա ընթացքում,

թ) բաժանորդի դիմումի համաձայն կատարել հեռախոսային ծառայությունների մատուցման դիմումի կամ պայմանագրի վերաձևակերպում:

Օպերատորը իրավունք ունի.

ա) անջատել բաժանորդային հեռախոսագիծը (գծերը), հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարումներ չկատարելու դեպքում: Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա ընթացքում պարտքի մարման դեպքում անջատված հեռախոսագծերը ենթակա են միացման, իսկ չվճարելու դեպքում՝ բաժանորդային գծերի հանման և պայմանագրի գործողության դադարեցման՝ հանման օրվանից սկսած երկու ամսվա ընթացքում կապի վերականգնման հնարավորությամբ,

բ) հանման օրվանից 2 ամսվա ընթացքում պարտքերը չվճարելու դեպքում հեռախոսակապի ծառայությունների մատուցումը իրականացնել ընդհանուր հիունքներով՝ նախկին պարտքերը մարելու պայմանով:

Բաժանորդը պարտավոր է.

ա) մատուցված հեռախոսակապի ծառայություն-